ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 16-Լ

«10» 04 2026 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի N 31 ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ «Դատախազներին, դատախազության գործունեությանն օժանդակող անձանց խրախուսման ներկայացնելու և խրախուսելու կարգը սահմանելու ու Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2015 թվականի հունիսի 19-ի N 36 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2018 թվականի ապրիլի 11-ի N 31 հրամանի հավելվածի 21-րդ կետում լրացնել նոր պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը և Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարը «Հայաստանի Հանրապետության դատախազություն» կրծքանշանով կարող են պարգևատրել Հայաստանի Հանրապետության դատախազությունում իրենց կողմից քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակված անձանց:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին և տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ